

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը սեպտեմբերի 1-ի կապակցությամբ

31.08.2016



Միրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ,

Շնորհավորում եմ նոր ուսումնական տարվա՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Դպրոցական տարիները յուրաքանչյուր մարդու կյանքում ամենաբարի ու ամենահիշարժանն են: Աշխարհում չկա ավելի հրաշալի բան, քան սովորելը, կարդալը ու նոր հորիզոններ բացահայտելը: Գիտելիքը մարդուն դարձնում է ավելի ուժեղ, իմաստուն և ավելի բարի: Ճանապարհը դեպի գիտելիք և կրթություն դժվարին է, պետք է զինվել համբերությամբ և ջանքեր գործադրել՝ ցանկալի արդյունքի հասնելու և ցանկած սերմերի քաղցր բերքը հավաքելու համար: Շնորհավորելով նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, իմ երախտիքի խոսքն եմ հղում մեր ուսուցիչներին: Ձեզ է վստահված մեր սերունդների հայեցի դաստիարակության հայրենանվեր ու դժվարին գործը: Դուք ձեր սաներին օգնում եք բացել գիտության գաղտնի դռները, բացահայտում հայ ազգի ապագա հանճարներին՝ նրանց մեջ սերմանելով սերն ու նվիրվածությունը հայրենիքի նկատմամբ ու դաստիարակելով Հայաստանի Հանրապետության արժանի քաղաքացիներ: Մաղթում եմ ձեզ հաջողություններ, սիրելի մանկավարժներ, ձեր շնորհակալ և պատվաբեր աշխատանքում:

Առանձնահատուկ ջերմությամբ ցանկանում եմ շնորհավորել առաջին անգամ դպրոց ոտք դրած մեր փոքրիկներին: Թող դպրոցական աշխարհը լեցուն լինի անհոգ ու լուսավոր ապրումներով, բազում հետաքրքիր ու գեղեցիկ ակնթարթներով: Ցանկանում եմ, որ ուսումնառության այս տարիները ձեզ համար լինեն ամենահիշարժանը, որպեսզի դպրոցը դառնա սովորելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու հիմնարար սյուն:

Միրելի աշակերտներ, հարգելի մանկավարժներ,

Կրկին շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության տոնի կապակցությամբ: Ցանկանում եմ բեղմնավոր և արդյունավետ ուսումնական տարի, նոր ու հետաքրքիր բացահայտումներ ու գերազանց գնահատականներ:

Բարի երթ: